

ԵԱՀԿ Սյունիքի գրասենյակը կազմակերպում է բնապահպանական միջոցառում

ԵՐԵՎԱՆ, 13 հոկտեմբերի 2006թ. -- Ավելի քան 30 դպրոցականներ և տեղաբնակ կամավորներ այս շաբաթ օգնել են մաքրել Վահանավանքի (թագավոր Վահանի մենաստանը) շրջակայքում գտնվող մոտ 2 հեկտար տարածք: Վահանավանքը պատմական հուշահամալիր է Հայաստանի Սյունիքի մարզում:

Այդ միջոցառումը «Ոսկե աշուն. մաքուր և գեղեցիկ միջավայր» բնապահպանական իրազեկության և մշակութային կրթության ծրագրի մի մասն է: Այն կազմակերպվել է Սյունիքում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման ներկայացուցչության և Կապանում Օրիուսի բնապահպանական հանրային տեղեկատվական կենտրոնի կողմից:

Տեղանքում հատուկ ցուցատախտակներ են տեղադրվել, որոնց վրա նշված է չաղտոտել շրջակա միջավայրը: Երեխաները տեղեկացան Վահանավանք մշակութային համալիրի պատմության, կենսաբազմազանության պահպանման, կլիմայի փոփոխության, տեղական և միջազգային բնապահպանական օրենքների մասին:

«Բնապահպանական կրթությունը կարևոր է, որպեսզի երեխաները օգնեն շրջակա միջավայրը մաքուր պահելու հարցում», - նշում է ԵԱՀԿ Սյունիքի ներկայացուցչության ծրագրի պատասխանատու Գարիկ Չիլինգարյանը: «Աղտոտումը հիմնականում հանքարդյունաբերության հետևանք է: Բայց մենք մոռանում ենք, որ շատ հաճախ բոլորս էլ սպառողական աղբ ենք ստեղծում, որը նույնպես աղտոտում է շրջակա միջավայրը»: